

**Արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի միատեղ եւ գուգահեռ շփումն ու զարգացումը  
«ՄԿՆԻԿ» աշխատանոցի փորձառութիւնը**

**Ի՞նչ միջավայրի մէջ է ապրում ֆրանսահայը**

*Ֆրանսիան միալեզու երկիր է եւ բաւական ճշգրտապէս ունի օտարի վրայ, ինչքան էլ որ պետական նպաստներ չի կործակում փոփոխման քաղաքականութիւններով, ի վերջոյ օտարը պիտի ձուլուի իրենց՝ ֆրանսիացիներին մէջ:*

*Հնդուներու թուրքի համաձայն՝ Ֆրանսիայում ապրում են 400.000 հայեր, կա 7 ամենօրեայ դպրոց, ուր յաճախում է ընդամենը 1250 աշակերտ: Սոյն դպրոցներում միայն արեւմտահայերէն է դասուանուում, թէւ այսօր դրանցում արեւելահայ աշակերտների թիւը մեծ տոկոս է կազմում: Միօրեայ կրթօջախների մէջ նոյնպէս դասուանում են լեզուն սկզբունքօրէն մնում է միայն արեւմտահայերէնը: Ֆրանսիայի հայաբնակ կենտրոններն են՝ հարաւում Մարսիլն իր բազմաթիւ բնակչութեամբ, կենտրոնում՝ Լիոնը իր յարակից բնակավայրերով, եւ Փարիզն իր արուարձաններով: Այս բնակավայրերը ունեն եկեղեցիներ, մշակութային կենտրոններ եւ վերը նշուած ամենօրեայ կամ միօրեայ դպրոցները: Վերջին տասնամեակներին Ֆրանսիայում Հայաստանից բազմաթիւ հայեր են հաստատուել, որոնք բնակութիւն են հաստատել ոչ միայն նշուած կենտրոններում, այլեւ բոլորովին այլ՝ մինչեւ վերջերս ոչ-հայաբնակ բնակավայրերում: Հայկական սփիւռքի այս համեմատաբար նոր ներգաղթեալները, ի տարբերութիւն հնաբնակների, առաւել էժ են մտնում հին հայկական կառույցներին եւ մնում մէկուսացած. իրենք իրենց մէջ դեռ կազմակերպուած չեն:*

*Եզրակացնենք՝ չնայած միօրեայ դպրոցների աշակերտների թուին, երեխաների միջեւ հաղորդակցման լեզուն հայարէնը չէ, ուստի Ֆրանսիան հայախօս գաղութ չէ, եւ հաղորդակցութեան լեզուն ֆրանսերէնն է:*

**ՄԿՆԻԿ ԱՇԽԱՏԱՆՈՑ**

**Ե՞րբ եւ ինչ՞ո՞ւ ստեղծուեց ՄԿՆԻԿԸ**

1990 թ. ՄԿՆԻԿը հիմնադրուեց մի քանի ծնողների կողմից, որոնք ունէին մէկ ընդհանուր մտահոգութիւն՝ իրենց հայախօս փոքրիկը ունենայ հայախօս միջավայր եւ ընկերներ եւ մեծանայ հայախօս: Առաջին տարին աշխատանքները սկսուեցին 11 երեխայով: Այս տարի բոլորեցին 25-րդ տարին, միջին հաշուով միաժամանակ ունեն 45-50 երեխայ:

**Ի՞նչ են ՄԿՆԻԿի նպատակները**

ՄԿՆԻԿ աշխատանոցը ծաւալում է կենսունակ բազմաբնոյթ կրթամշակութային գործունէութիւն: Այն

յենում է ծնող-երեխայ-վարիչ եռեակի գործակցության վրայ: ՄԿՆԻԿը աշխատանոց է եւ ո՛չ դպրոց:

1. ամրապնդել եւ զարգացնել երեխայի երկլեզուութիւնը (հայերէն եւ ֆրանսերէն)՝ ապահովելով ֆրանսիական եւ հայկական լեզուամշակութային աշխարհների ներդաշնակ համակցութիւն
2. երեխայի համար հայերէնի իմացութիւնը դարձնել ամբողջական՝ զգացմունքների, մտածողութեան եւ ստեղծագործութեան լեզու՝ յենուելով նրա հետաքրքրասէր, պրպտող եւ ստեղծագործ ունակութիւնների վրայ
3. ընդլայնել երեխայի ընտանեկան հայախօսութեան շրջանակը՝ դրան հաղորդելով հաւաքական համայնֆային տարողութիւն. երեխայի համար ստեղծել բնական ընկերական միջավայր, որպէսզի լեզուի գործածութիւնը լինի անմիջական եւ ինքնաբերական
4. ՄԿՆԻԿի յարատեւութիւնը ապահովելու համար՝ ձեւաւորել նոր ուսուցիչ-վարիչներ

### **Ի՞նչ են ՄԿՆԻԿի սկզբունքները**

- ՄԿՆԻԿը ընդունում է միայն հայախօս երեխաներ (արեւմտահայերէն եւ արեւելահայերէն խօսող )։ Ծնողներից մէկը գոնէ յանձնառու պիտի լինի երեխայի հայախօսութիւնը ապահովել մինչեւ չափահաս տարիք։
- ՄԿՆԻԿը համահաւասար տեղ է յատկացնում լեզուական եւ արտալեզուական աշխատանքներին։
- ՄԿՆԻԿի հաղորդակցութեան աշխատանքային լեզուն միայն հայերէնն է։
- ՄԿՆԻԿում հայերէն լեզուի ուսուցումը ինքնապատակ չէ. լեզուն աշխարհաճանաչողութեան միջոց է։
- ՄԿՆԻԿի կրթական ծրագիրը ընթանում է ֆրանսիական «Ազգային կրթութեան» ծրագրի հունով։
- ՄԿՆԻԿում հայերէնի երկու գրական տարբերակները՝ արեւմտահայերէնը եւ արեւելահայերէնը, հաւասարապէս ներկայ են։ Ուսուցումը դասական ուղղագրութեամբ է։
- ՄԿՆԻԿի մշակութային ծրագիրը, հաւաքոյթները եւ ճամբորդութիւնը իրականացւում են ըստ հայ աւանդական տօնացոյցի։ Խրախնամները եւ հանդէսները կրթամշակութային աշխատանքների շարունակութիւնն են։

### **Ի՞նչ են ՄԿՆԻԿի ժամերը եւ աշխատակազմը**

1. ՄԿՆԻԿ են յաճախում 3-ից մինչեւ 17 տարեկան մանուկներ եւ պատանիներ։ Մինչեւ այսօր հաւասարակշռուած է եղել արեւելահայերէն եւ արեւմտահայերէն խօսող երեխաների թիւը։ Եթէ առաջի տարիներին յաճախող երեխաները հին սփիւռֆահայերի զաւակներ էին, այսօր ունենք Հայաստանում ծնուած ծնողների շատ թուով զաւակներ։
2. Աշխատանքները տարւում են շաբաթ կէսօրից յետոյ ժամը 14:00-18:15

3. Տարուայ ընթացքին երկու արձակուրդային շրջանների ընթացքում կազմակերպում ենք 5-օրեայ աշխատանոց ժամը 10:00-17:00
4. Համբարձման տոնին կազմակերպում ենք 4-օրեայ համբորդութիւն ծնողների մասնակցութեամբ:
5. Վարիչները հիմնականում ընտրուում են երեխաների ծնողների միջից: Արդէն մի քանի տարի է, որ ունենք նոր սերնդի ներկայացուցիչ երիտասարդներ, որոնք եղել են ՄԿՆԻԿի նախկին սաներ:

### **Ի՞նչ է ՄԿՆԻԿի աշխատանքային եղանակը**

- Պահերը բաժանուած են 4 մասերի՝ ա)«գրաւորի», բ)«բանաւոր-գեղարուեստի», գ)«թատրոնի» եւ դ)«նախընթրիքի ու զբօսանքի»: Միայն ա)«գրաւոր»ի պահին է, որ արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի խմբակներ են կազմուում եւ առանձին աշխատում: Այլապէս միւս պահերին խմբերը միանում են: Մանկապարտէզում (3-5 տարեկան) ամբողջ աշխատանքները միացեալ են տարւում:
- Բոլոր մակարդակների մէջ ներկայ են երկու վարիչ՝ երեւելահայերէն եւ արեւմտահայերէն խօսող:
  - a. Նրանք կայուն են իրենց լեզուական տարբերակի մէջ. (գիմագինի ազդեցութեամբ լեզուն չի շեղուում, խառը արեւելահայերէն-արեւմտահայերէն չի դառնում):
  - b. Երեխաները խօսում են իրենց մայրենի լեզուով. հարկ եղած պարագային լեզուի սխալը ուղղում է համապատասխան վարիչը. միւսը չի միջամտում:
  - c. Մանկապարտէզից սկսեալ երեխաները բանաւոր լսում են միւս տարբերակը եւ հասկանում:
  - d. Աւելի բարձր տարիքի երեխաները թէկուզ ընթերցում են միւս տարբերակը հասկանալու իմաստով, բայց երբէք չի պահանջուում իրենցից խօսելիս կամ գրելիս շեղեն լեզուն եւ արտայայտուեն միւս տարբերակով:
  - e. Խմբական աշխատանքի ընթացքին 2 վարիչների միջեւ կայ յստակ հասկացողութիւն. երբ նրանցից մէկը խումբ է վարում, անհրաժէշտութեան պարագային միւս վարիչը, սահուն կերպով, խօսակցութեան մէջ ներս է մտնում, կրկնում կամ բացատրում միւս տարբերակով այն, ինչ որ կարող էր անհասկանալի լինել միւս խմբի համար:

### **Ի՞նչպէս են կազմուում ՄԿՆԻԿի ծրագրերը**

- Ծրագրերը հիմնականում նորաստեղծ են: Վարիչները հնարաւորութիւններ ունեն փորձարարական աշխատանքներ կատարելու: Ունենք գրողարան, որը համալրուած է տարբեր երկրներում հրատարակուած դասագրքերով եւ կրթական նիւթերով: Նկատի ունենալով թէ ի՞նչ են սովորում

երեխաները իրենց ամէնօրեայ ֆրանսիական դպրոցներում, փորձում ենք տալ նրանց այդ բոլորին համագործակցելու հայերէնով:

- Ծրագրերը ստեղծում են ըստ խմբերի եւ ըստ դրանց մակարդակների:
- Ծրագրերը ստեղծում են լեզուական եւ կրթա-դաստիարակչական լիարժէք բովանդակութեամբ, բայց անընդհատ փնտրում ենք հնարքներ, որպէսզի դրանք մատուցուեն հանելի եւ ոչ թէ դաս սերտելու եղանակով: Նրանք պիտի լինեն
  - խմբական ծրագրեր, երեխային չթողնել կրաւորական վիճակի մէջ:
  - Փնտրել երեխաների ուղղակի մասնակցութիւնը եւ ներդրումը:
  - Ամէն պահին նիւթը պիտի ներկայացուի բանաւորի, գրաւորի, ձեռային աշխատանքի նաեւ մարմնական շարժումների տեսքով:
- Ծրագիրը մշակում է վարիչների կողմից:
  - Միշտ նկատի է առնում նոյն տարիքային խմբի համար երեխաներին մատուցել համագործակցելու հայերէն եւ արեւմտահայերէն նիւթեր: Դա չի՛ նշանակում ընտրել նիւթը, օր՝ արեւելահայերէն եւ փոխադրել արեւմտահայերէնի: Փոխադրութեամբ չէ որ համագործակցելու դարձնում: Կարեւորութիւն ենք դարձնում լեզուամտածողութիւնը. յարգում ենք 2 գրական տարբերակների իւրայատկութիւնները:

### **ՄԿՆԻԿԻ այլ գործունէութիւնները**

- **Տօների եւ տոհմաբանութեան ընտանեկան հաւաքոյթներ:**
- **Շրջայցեր երեխաների եւ ծնողների հետ:**
- **Հրատարակչական գործունէութիւն-** Պարբերաբերք (պատրաստուած երեխաների գրութիւններով եւ գծագրութիւններով), ընթերցանութեան գրքոյկների, ամառային ժամանցի տետրերի, տարեկան օրացոյցի, սալիկների, ձեռքի աշխատանքների (Շախմատ), ֆիլմերի եւն-ի ստեղծում:
- **Գրադարան-խաղադարան** – լեզուական եւ սեղանային խաղերի, ընթերցանութեան գրքերի հաւաքածոյի՝ մանկապատանեկան հրատարակութիւնների, նաեւ վարիչներին նիւթ հայրաբոյր կրթական եւ մանկավարժական դասագրքերի հաւաքածոյի կազմում:
- **Գրախանութ** - ՄԿՆԻԿԻ հրատարակութիւնների եւ ընտրովի գրքերի, սալիկների եւ սեղանային խաղերի վաճառք ՄԿՆԻԿԻ շրջանակում կամ հայկական այլ դպրոցներում:

### **Եզրակացութիւն**

Գրական երկու հայերէնները ապրում են նոյն միջավայրում՝ առանց մէկը միւսի վրայ ճնշելու դառնալու: Երեխաների մօտ զարգանում է իրար միջեւ յարգանքը, փոխըմբռնումը, լեզուական տարբերակների ճանաչողութիւնը, ընդարձակում է իրենց լսող եւ հասկացող լսարանը:

**Գրի առաւ' Արմինէ Գրիգորեանը**

**28.07.2015 թ. Երեւան**